




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

98 72

Պրոֆեսորներ Բոլոր յեղբների, միացե՛ք!

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 3.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

ԿՈՄ.-ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

3KCM

2-21

ՀՐԱՏԱՐԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՏՆԵՐ Կ. ՕՇ. Մ. ԿԵՆՏԿՈՍԻ

Յերևան

1924

1924

9872

8005 932 1 S

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գրառեպար № 977.

Տպագրական արեստի 2-րդ տպարան. Տիրած 5000.

Պատ. № 2509.

Ռ. Կ. ՅԷ. Մ. ԾՐԱԳԻՐԸ

1. Մարդկային հասարակութիւնը լեռնալիւսի
 և անկերիչ պատերազմների ու արմատական հեղաշրջում-
 ների մի դարաշրջան: Կազմալուծվում ու կործանվում
 և ամբողջ աշխարհում տիրապետող հին կարգը, վորի
 ժամանակ մի բուռն բանկիրներ, գործարանատերեր
 ու կալիքածատերեր սարկացնում ու շահագործում էին
 հարյուր միլիոնավոր բանվորների ու գյուղացիների:
 Այս կարգը, վոր կոչվում է Կապիտալիզմ, շահի, յեկա-
 մուտի հետեից ընկած առաջ եր ընթանում և ուժա-
 նում: Շահի հետապնդումն այնտեղ հասցրեց, վոր կա-
 պիտալիստական խոշոր միութիւնները՝ բուրժուական
 պետութիւնները, կողոպտեցին ու կապիտալի յերկա-
 թե կրունկի տակ դրին ամբողջ աշխարհը: Հարստա-
 նալու ծարավը, տիրապետելու ձգտումը և աշխարհի
 բաժանման համար մղվող պայքարը առաջացրին չորս
 տարի տևող հրեշավոր սպանդանոց-պատերազմը, վոր
 կապիտալիստների մի խումբը մղում եր մյուսի դեմ՝
 իր խաբված ու վարձու ստրուկների միջոցով: Այդ
 կռիւմ կապիտալիստները կոտորեցին միլիոնավոր բա-
 վագույն աշխատավորներ, վոչնչացրին բանվոր յերի-
 տաւարդութեան լավագույն մասը և տամնյակ միլիո-
 նավորների յեղանդամ ու հաշմանդամ դարձրին:
 Նրանք բանվոր դասակարգին մասնեցին անյերեա-
 կայի տանջանքների, քաղցի, ցրտի ու հիվանդու-
 թիւնների:

2. Նորանոր շահեր ձեռք բերելու և իրենց մըը-
 ցակիցներին ուժաթափ անելու հուսով կապիտալիս-

տական պետութիւնները կրկին պատրաստուած են նոր պատերազմներէ: Նրանք հույս ունեն, թե ելի կը-խաբեն բանվորներին, կվառեն նրանց սրտում ազգա-յին ատելութիւն և բոլոր ժողովրդներին կքաշեն դե-պի մի նոր, չտեսնված կոտորած:

Իրենց սոցիալիստական համարող կուսակցու-թիւնները, վորոնք սակայն պատերազմի ընթացքում դավաճանեցին բանվոր դասակարգին, կեղծ հույսեր են տածում, թե կապիտալիստական հասարակակարգը կարող է կայուն մնալ և կոչ են անում քաղաքացիա-կան հաշտութիւն ստեղծել դասակարգերի միջև ու գործակցել բուրժուազիային: Սակայն հետ-պատե-րազմյան շրջանն արդեն ցույց տվեց, վոր բուրժուա-զիան ընդունակ չէ պատերազմի շնորհիվ քայքայված համաշխարհային տնտեսութիւնը վերականգնելու և մարդկութիւնն ազատելու վոչնչացումից: Հարյուր հազարավորների գործադրկութիւնը, գործադուլները, լոկաուտները միլիոնավոր բնակչութիւն կարիքն ու քաղցը սովորական յերևույթ են դարձել բուրժուա-կան պետութիւնների մէջ: Այսպիսով մարդկութիւն-նը կանգնած է յերկնաբանքի առաջ. կամ վոչնչացում և կուլտուրայի կործանում և կամ անցում մի նոր հասարակակարգի՝ կոմունիզմի: Յերրորդ ճանապարհ՝ չկա:

Այս շրջանն զգալ է տալիս ամբողջ աշխատավո-րութիւնն ու շահագործվող մասսային կապիտալիս-տական հասարակակարգում ունեցած իր անհուսալի վիճակը և սոցիալիստական հեղափոխութիւն անհրա-ժեշտութիւնը. հեղափոխութիւն, վոր հենց իրեն՝ պրո-լետարիատին կազատագրէ կապիտալի լծից և շահա-վետ կլինի ամբողջ մարդկութիւնը:

Միակ բավականաչափ ուժեղ, կազմակերպւած, գիտակից ու կապիտալի լուծը տապալելու ընդունակ դասակարգը պրոլետարիատն է և կապիտալի կործա-նումը գրգռւած է նրան պայքարի դուրս գալ բուրժու-ական պետութիւն դեմ՝ պրոլետարիատի գիկտատու-րա հաստատելու համար: Սկսվում է յերկարատե ան-ցողական դարաշրջանը, վորի ժամանակ հաղթանա-կող բանվոր դասակարգի ձեռքին պետական իշխանու-թիւնը հանդիսանում է մի հզոր լծակ՝ տնտեսական հեղաշրջման համար: Պրոլետարիատը խլում է բուր-ժուազիայից արտադրական միջոցները և նոր հասա-րակութիւն կառուցման դժվարին ու յերկարատե աշ-խատանքի ընթացքում սոցիալիստական տնտեսութիւն հիմքն է դնում: Պրոլետարիատի այս պատմական մեծ միսսիան կարող է իրականանալ այն դեպքում, յեթե նրա պայքարի և շինարարութիւն դեկավարը լինի կոմունիստական կուսակցութիւնը: Նա տարբերվում է պրոլետարական ամբողջական մասսայից նրանով, վոր տեսնում է բանվոր դասակարգի պատմական ու-ղին իր ամբողջութիւնը և աշխատում է այդ ճանա-պարհի բոլոր պտույտներում պաշտպանել վոչ աշխա-տավորութիւն մասնակի խմբակների, այլ ամբողջ պրոլետարական դասակարգի շահերը: Միայն գերա-զույն հերոսութիւն հանդես բերելով և զոհողութիւն-ներ, տանջանքներ ու զրկանքներ կրելու պատ-րաստակամութիւնը, վորոնք պահանջվում են կապի-տալի դեմ մղվող հսկա պայքարի ընթացքում, պրոլե-տարիատն իր կոմունիստական կուսակցութիւն դե-կավարութիւնը կկերտի նոր, ներդաշնակ կոմունիս-տական հասարակութիւն շինքը, ուր չեն լինի իշխող-ներ ու տերեր, ուր ամբողջ մարդկութիւնը կկազմի համերաշխ աշխատանքի մի մեծ արտել:

3. Այդ պայքարին աշխատավորութեան մեկ սերունդը չէ, վոր պիտի մասնակցի: Յերկրից յերկիր անցնող համաշխարհային կոմունիստական հեղաշրջումը շատ ժամանակ է պահանջում կապիտալիստներէ իշխանութիւնը տապալելու, պրոլետարական զիկտատուրա ստեղծելու, սոցիալիստական տնտեսութեան հիմքը կազմակերպելու, արտադրական ուժերը ծայր սատիճանի բարձրացնելու, աշխատավորական լաշն մատաների իդեոլոգիան և կենսական կենցաղային սովորութիւնները փոխելու համար: Նա ընթանում է բանվոր գասակարգի բազմաթիւ հաղթութիւններէ ու պարտութիւններէ բովով և վերջնականապէս իրականանալ կարող է միայն տասնյակ տարիների ընթացքում: Պրոլետարիատի յուրաքանչյուր նոր սերունդը, բուրժուական հասարակարգի մեջ իր անհուսալի վիճակի գիտակցութիւնից զրոյթած՝ թարմ ուժերով ու կրկնակի եներգիայով պիտի շարունակէ իր նախորդների սկսած պայքարը՝ կոմունիզմի համար մղվող պայքարը:

Բանվոր գասակարգի առաջ զրկած է մի խնդիր, պատրաստել իր համար պահեստի ուշժ վոր շարունակաբար պիտի լցնի պրոլետարիատի ազատագրութեան համար պայքարող մարտիկների շարքերը: Այդպիսի պահեստի ուշժ հանդիսանում է բանվոր յերիտասարդութիւնը, վորը կապիտալիզմի ժամանակ դաժանորեն շահագործվում է գործարաններում, բուրժուական դպրոցների, մամուլի ու յեկեղեցու շնորհիւ սխտեմատիկորեն աշխատեցնում է հոգեպէս ու վոլընջանում ճակատամարտերի արշունդով դաշտերում՝ հանուն կապիտալիստների շահերի:

Կապիտալիստական արդյունաբերութեան զար-

գացումը և իմպերիալիստական պատերազմը արտադրութեան մեջ քաշեցին բանվոր յերիտասարդութեան նորանոր գնդեր: Բանվոր գասակարգի դրութեան վատանալուն զուգընթաց վատթարանում է և նրա ավելի ևս շահագործվող մասի՝ բանվոր յերիտասարդութեան դրութիւնը:

Այդ բանը նպաստում է բանվոր յերիտասարդութեան գասակարգային ինքնագիտակցութեանը և նրա շարքերում կոմունիստական շարժման հետագա զարգացման համար կարևոր նախապայման է հանդիսանում:

Յերիտասարդութեան ինքնագործունեկութիւնը իր հեղափոխական գաստիարակութեան հիմքն է կազմում: Նրա առանձնահատուկ տարիքը, աշխատանքի ու գաստիարակութեան առաքելիզում ուրույն խնդիրները, կարևոր են զարձնում իր՝ յերիտասարդական հատուկ կազմակերպութիւնների գոյութիւնը. այդ կազմակերպութիւնների մեջ աշխատավոր յերիտասարդութիւնը պիտի վարժվի կազմակերպչական ինքնուրույն գործունեկութեան, լաշն նախաձեռնողութեան և կոմունիստական շինարարութեան ու պայքարի բարդ խնդիրների լուծման:

4. Ռ. Ս. Ֆ. Ս. Հ.-թեան մեջ պետական իշխանութիւնն արդեն գտնվում է բանվոր գասակարգի ձեռքին: Համաշխարհային կապիտալի դեմ մղվող յերեք տարվա հերոսական պայքարի ընթացքում նա պաշտպանեց ու ամրապնդեց իր խորհրդային իշխանութիւնը: Թեպետ և Ռուսաստանն ունի մեծ քանակութեամբ բնական հարստութիւններ, բայց նա հետամնաց է վորպէս արդյունաբերական յերկիր և մանր բուրժուական ազգաբնակչութիւնը գերակշռում է այնտեղ:

Սոցիալիզմին հասնել կարող ե նա լով պրոլետարական համաշխարհային հեղափոխութեան շնորհիւ, վորի զարգացման շրջանն ենք թեւակոխել արդեն: 1917 թվին բանվոր դասակարգն իր ձեռքն առավ իշխանութիւնը և նվաճեց Ռուսաստանը, վորն ավերվել եր իմպերիալիստական պատերազմի և կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետութեան շնորհիւ: Ավերածութիւններն ու թշվառութիւնները բաղմապատկւեցին, յերբ պրոլետարիատի կողմից իշխանութեան գրավումից հետո սկսվեց քաղաքացիական կռիւն ու բլոկադան: Խորհրդային իշխանութիւնը շրջապատված ե կապիտալիստական պետութիւններով, գյուղական տնտեսութիւնը, արդյունաբերութիւնն ու փոխադրական միջոցներն ընկել թուլացել են, մյուս կողմից Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ից գյուղացիութեան ճնշող մեծամասնութիւնը մանր-սեփականատիրական բնույթ ունի. այս հանգամանքները զրդում են տնտեսութեան մանր-բուրժուական ձևին վորոշ անհրաժեշտ գիշումներ անել: Ներկայումս բանվոր դասակարգի առաջ դրված են հետեյալ խնդիրները. պաշտպանել սեփական Հանրապետութիւնը համաշխարհային գիշատիչների կողմից պատրաստվող նոր հարձակումներից և մի կողմից պայքար մղել համաշխարհային հեղափոխութեան զարգացման համար, մյուս կողմից յերկրի արտադրական բոլոր ձեռքերի բարձրացումով ու ամեն տեսակի դոհարերութիւնների գնով ստեղծել նոր, սոցիալիստական տնտեսութիւն:

Գլուղում Խորհրդային իշխանութիւնը հենվելով պրոլետարական ու կիսապրոլետարական խավերի վրա՝ ձգտում ե միաժամանակ միջակ գյուղացրութիւնը

ևս քաշել դեպի սոցիալիստական շինարարական աշխատանքները:

Իր գաղափարական ազդեցութեամբ Խորհրդային իշխանութիւնը պայքարում ե գյուղացիութեան հետախոսութեան և կուլակների նրանց վերա ունեցած ազդեցութեան դեմ, գյուղացիութեան հետ զործնական համաձայնութեան գալով, նրա կենսական պահանջներին ու շահերին բավարարութեան տալով՝ Խորհրդային իշխանութիւնը ձգտում ե քաշել նրան բանվոր դասակարգի կողմը:

5. Պրոլետարական հեղափոխութեանն Ռուսաստանում խոշոր հնարավորութիւններ ե ստեղծում պրոլետարական յերիտասարդութեան կենցաղի, աշխատանքի պայմանների արմատական փոփոխման և զարգացման համար, վոր գնում ե շաղկապված բանվոր դասակարգի պայքարի ու սոցիալիստական շինարարութեան հետ միասին:

Բանվոր յերիտասարդութիւնն ակտիվ կերպով մասնակցում ե պրոլետարիատի պայքարին ու շինարարութեան և առաջին հերթին իր կյանքի սոցիալիստական հիմունքներով վերաշինման: Նա այդ առում ե իր կազմակերպութեան՝ Ռ. Կ. ՅԵ. Մ-յան միջոցով: Վերջինս միացնում ե կազմակերպում ե բանվոր յերիտասարդութիւնը՝ կոմունիզմի համար մղվող պայքարին ակտիվ մասնակցելու և ամբողջ կյանքը նոր հիմունքներով վերակազմելու համար: Տեսական կրթութեան հետ սերտորեն կապված այս ակտիվ զործունեյութեան ընթացքում բանվոր յերիտասարդութիւնը դաստիարակվում ե կոմունիստներն և պատրաստվում ե բանվոր դասակարգի հասակավոր սերունդին փոխարինելու: Միութեան դաստիարակչական

նշանակութիւնը բնորոշում եւ նրա դերը բանվոր դասակարգի կազմակերպութեան ընդհանուր կառուցվածքի մեջ եւ հանդիսանում եւ նրա հիմնական աշխատանքը: Ռ. Կ. ՅԵ. Մ-յունը իր դրոշի տակ համախմբելով պրոլետարական յերիտասարդութեան առաջավոր տարրերը՝ աստիճանաբար իր շարքերն եւ գրավում նրա ամբողջ մասսան: Այսպիսով Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-յան մեջ նա հանդիսանում եւ բանվոր յերիտասարդութեան մասսայական շարժման միակ ձևը:

ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ

6. Բուրժուական պետութիւնը հիմնված եւ դասակարգային բաժանման վրա: Նա բանվոր յերիտասարդութեանն աշխատեւ եր դաստիարակում, վոր նա դառնա կապիտալի կամազուրկ ստրուկը. շղթայում եր նրա ինքնագործունեյութեան ամեն մի արտահայտութիւնը եւ խեղդում նրա մեջ հասարակական ամեն մի զգացմունք: Պրոլետարական պետութիւնն իր ստեղծագործական աշխատանքի ընթացքում ձգտում եւ բանվոր յերիտասարդութեանը դաստիարակել աշխատեւ, վոր նա ոգտակար լինի աշխատավոր հասարակութեան համար. հոգեպես թե ֆիզիքապես լինի ազատ ստեղծագործող ու կառուցողը նոր՝ սոցիալիստական հասարակակարգի:

Բանրոր յերիտասարդութիւնը պրոլետարիատի մի մասն եւ, ուստի եւ նրա կենցաղի ու կրթութեան ձևեր ստեղծելը եւ նրա աշխատանքի վերակազմութիւնը ամբողջ բանվոր դասակարգի ու նրա պրոլետարական պետութեան գործն եւ: Այդ աշխատանքը

վարում եւն Խորհրդային իշխանութեան ընդհանուր որդանները եւ արհեստակցական միութիւնները:

Ազատագրելով բանվոր յերիտասարդութեանը՝ Խորհրդային իշխանութիւնն արմատապես փոխում եւ նրա աշխատանքի բովանդակութիւնը: Անշափահաս յերիտասարդութեան աշխատանքը դադարում եւ շահագործման առարկա լինելուց եւ յենթարկվելով կրթական նպատակներին՝ դառնում եւ սոցիալիստական դաստիարակութեան հիմքը: Կապիտալիստական գործարանն անշափահասին դարձնում եր մեքենայի մի հասարակ մասնիկը: Խորհրդային իշխանութիւնը, վերակազմելով մինչեւ 18 տարեկան անշափահասների արդյունաբերական աշխատանքը՝ նրանցից պատրաստում եւ բազմակողմանի զարգացում ստացած պրոլետարներ: Նոր պրոլետարական կադրեր պատրաստելն իրականացվում եւ բանվոր յերիտասարդութեան զըպրոցների կազմակերպութեամբ, ուր վորոշ մասնագիտութեան ուսուցումը շախկապված եւ անշափահասի արտագորդական աշխատանքի հետ. տեսական առարկաների դասավանդումը տեղի յե ունենում հենց աշխատանքի պրոցեսում, վորպիսի հանգամանքը նըպաստում եւ արտագործութեան պրոցեսի ըմբռնման՝ թե տեխնիկական եւ թե հաստրակական տեսակետից: Նույնպես տեղի յեն ունենում արտագործական (ակումբային) զբաղմունքներ, վորոնք ոժանդակում եւն անշափահասին գրսեորել եւ ձևակերպել իր ստեղծագործական ընդունակութիւնները, իսկ ֆիզիքական դաստիարակութիւնը նպաստում եւ առողջ կազմվածքով աշխատավորներ ու մարտիկներ պատրաստելուն:

7. Բանվոր յերիտասարդութեան աշխատանքի կենցաղի ու կրթութեան ձևերի ստեղծումը, նրա հո-

գեկան ու ֆիզիքական ուժերի բազմակողմանի զարգացումը հնարավոր չի լինիլ, առանց անչափահասների աշխատանքի ասպարիզում նախնական բարեկարգումներ մտցնելու: Դրա համար ել Սորհրդային իշխանութիւնը կիրառում է բանվորական որի կրճատում՝ 18 տարին չլրացածների համար մինչև 6 ժամ, իսկ 16 տարին չլրացածներին՝ 4 ժամ:

Արգելում է ոգտագործել մինչև 14 տարեկան յեւրեկանների ու անչափահասների աշխատանքը, կիրառում է բանվոր յերիտասարդության համար մի ամսյա արձակուրդ՝ ոռճիկի վճարումով: Սահմանում է անչափահասների համար հատուկ տարիֆ, վորն ապահովում է բանվորական որվա վաստացի կիրառումը: Զի թույլատրում նրան արտաժամյա և գիշերային աշխատանքներ, արգելում է արդյունաբերական աւանձնապես վնասակար ճյուղերում աշխատել և բարեկավում է նրա կենցաղային պայմանները: Այս բոլորի իրականացմանը հսկելու համար Սորհրդային իշխանութիւնն ստեղծում է աշխատանքի տեսչության ասսիստենտների հիմնարկ, վորն առաջ և քաշվում հենց իր՝ բանվոր յերիտասարդության միջից:

8. Բանվոր յերիտասարդության սոցիալիստական դաստիարակութիւնը լայն չափով իրականացնել հնարավոր է լոկ այն դեպքում, յերը նա կազատվի փողոցի նեխիչ մթնոլորտից, ընտանիքի մանր-բուրժուական արամադրութիւններից, գոյության նյութական ծանր պայմաններից:

Դրա համար ել պրոլետարական պիտութիւնը բանվոր յերիտասարդության համար հիմնում է կոմունայի տներ և կովում և կապիտալիզմի միացորդների՝ պոռնկության, սպիկուլյացիայի և անխնամատարության դեմ:

9. Սոցիալիստական դպրոցներ հիմնելու խնդրին զուգընթաց Սորհրդային իշխանութիւնը մի շարք միջոցներ է ձեռք ստնում, վոր հնարավորութիւն տա բանվոր յերիտասարդությանը՝ յուրացնելու բոլոր այն գիտութիւններն ու հոգեկան կարողութիւնները, վոր ստեծել է մարդկութիւնը և վորին առաջ տիրապետում եր բացառապես բուրժուազիան: Դրա համար ել Սորհրդային իշխանութիւնը հանրապետության բոլոր կրթական-գաստիարակական հիմնարկութիւններում առավելապես բանվորա-գյուղացիական յերիտասարդության ընդունելութիւն է սահմանում: Բարձրագույն դպրոց մտնելը գյուրացնելու համար բանվորական ֆակուլտետների հատուկ ցանց է ստեղծում, ուսանողների նյութական դրութիւնն և ապահովում, վորպեսզի իրապես հնարավորութիւն տա պրոլետարիատին և գյուղացիությանը՝ ոգտվելու բարձրագույն դպրոցից:

10. Ու. Կ. Յե. Մ-ներ, վոր բանվոր յերիտասարդության մասսայական կազմակերպութիւնն է, իր ամենակարեւոր խնդիրներից մեկն է համարում գործոն մասնակցութիւն ցույց տալ պրոլետարական պիտութիւն գործունեյությանը՝ բանվոր յերիտասարդության աշխատանքի ու կրթութիւն վերակազմութիւն գործում:

Նա գործնականի մեջ կիրառել է տալիս Սորհրդային որենսդրութիւնը հաստատված միջոցները, բանվորա-գյուղացիական յերիտասարդութիւն լայն մասնակերին ու բոլոր աշխատավորներին բացատրում է դրանց կյութիւնը, մշակում է նոր առաջարկութիւններ ու նախապճեր, ոգնում է պետական մարմիններին աշխատավորներով ու իր սեփական ապարա-

տով՝ խնայել, բնավ իր վրա չառնելով պետական ապարատի տեխնիկական ֆունկցիաները:

Պետական մարմիններում ունեցած իր ներկայացուցիչների միջոցով և Կոմունիստական Կուսակցության ոգնութեամբ Ռ. Կ. Յե. Մ-նը մասնակցում և պրոլետարական պետութեան աշխատանքի ղեկավարմանը՝ բանվոր յերիտասարդութեան աշխատանքի ու կրթութեան գործի ասպարիզում:

11. Քանի դեռ Ռուսաստանի ժողովրդական տրետեութեան մեջ ուժեղ կլինեն մասնավոր կապիտալիստական տարրերը Ռ. Կ. Յե. Մ-յան առաջ զրկած կլինի հետեյալ խնդիրը. կովել մասնավոր կապիտալի և մանր տերերի, տնայնագործների ու արհեստավորների դեմ՝ անչափահաս բանվորների աշխատանքի ապահովութեան ու պաշտպանութեան համար:

Քանի վոր Սոցիալիստական Հանրապետութեանը շրջապատված և կապիտալիստական յերկրներով և հենց իր ներսում աճում են կապիտալիստական հարարութեանները, անչափահաս բանվորների աշխատանքն ոգտագործող պետական որգանքների և տնտեսական հիմնարկութեանների գործնական կյանքում հնարավոր են դառնում աշխատեողներ. Ռ.Կ.Յե.Մ-յան նպատակն և արմատապես վերացնել նման աշխատեողները: Այս նպատակին հասնելու հանար Ռ.Կ.Յե. Մ-նը գործի յե կոչում անկազմակերպ բանվոր յերիտասարդութեան լայն մասսաներին:

Պրոլետարիատի տնտեսական շահերը պաշտպանող մասսայական կազմակերպութեանները արհեստակցական միութեաններն են: Քանի վոր բանվոր յերիտասարդութեանը բանվոր դասակարգի մի մասն և, իսկ նրա շահերը լիովին զուգադիպում են պրոլե-

տարիատի դասակարգային շահերին, Ռ. Կ. Յե. Մ-նը բանվոր յերիտասարդութեան աշխատանքի, կենցաղի ու կրթութեան պայմանների բարելավման ասպարիզում իր աշխատանքն ու պայքարը տանում և արհեստակցական միութեանների միջոցով և նրանց հետ միասին Ռ. Կ. Յե. Մ-նը գործոն մասնակցութեան և ցույց տալիս արհմիութեանների աշխատանքներին, մասնավանդ նրա այն մասին, վոր վերաբերում և բանվոր յերիտասարդութեանը: Դրա համար նա տալիս և իր ներկայացուցիչները, ոժանդակում և անդամագրութեան գործերին, ֆոնդեր ստեղծելուն և նրանց պահանջը կյանքի մեջ անցկացնելուն և այլն և այլն:

Բանվոր յերիտասարդութեան տնտեսական շահերի պաշտպանման խնդրում Ռ. Կ. Յե. Մ-նը, վորպես Կոմունիստական դաստիարակութեան կազմակերպութեան, իր պահանջները հարմարեցնում և պրոլետարական պետութեան ընդհանուր շահերին:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԺԻՆԱ- ՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

12. Խորհրդային սահմանդրութեանն ընտրական տարիքային ցենզն իջեցնելով մինչև 18 տարեկանի, վորը չի արել աշխարհիս յերեսին և վնչ մի բուրժուական դեմոկրատական սահմանադրութեան, լիապես ապահովում և բանվոր ու գյուղացի յերիտասարդութեան քաղաքացիական իրավունքները, նրանց դարձնում և պրոլետարական պետութեան լիակատար լիարժեքների տեր քաղաքացի:

Պրոլետարական յերիտասարդութեան և իր կազմակերպութեան՝ Ռ. Կ. Յե. Մ.-թեան նպատակն այն

և, վոր Խորհրդային հանրապետութեան շինարարական կյանքին ու աշխատանքներին գործոն մասնակցութիւնն ցույց տալու համար բանվոր յերիտասարդները լիովին ոգտագործեն իրենց բոլոր իրավունքները:

13. Ռուսաստանում Խորհրդային իշխանութեան հիմնական խնդիրն է. Խորհրդային հանրապետութեան պետական ապարատի կառուցումը, ամրապնդումն ու կատարելագործումը և սոցիալիստական տնտեսութեան շինարարութիւնը: Ռուսաստանի պրոլետարիատը, վորոշ շրջանակներում թույլ տալով մասնավոր կապիտալիստական տնտեսութեանների զարգացումը՝ առաջին հերթին պիտի ապահովի խոշոր արդյունաբերութեան հաջող կառուցումը. պիտի հաշվի առնի և հսկողութիւնն նշանակի մասնավոր ձեռնարկութեանների վրա և ամբողջ ուժով պիտի աշխատի բարձրացնել և բարելավել գյուղատնտեսութիւնը:

Ռ. Կ. Յե. Մ.-նր գործոն մասնակցութիւնն և ցույց տալիս Կոմունիստական Կուսակցութեան և Խորհրդային իշխանութեան սոցիալիստական շինարարութեան բոլոր աշխատանքների ժամանակ և նրանց միջոցով իր անդամների և անկազմակերպ բանվորագյուղացիական յերիտասարդութեան շարքերից դաստիարակում ու պատրաստում է Խորհրդային պետութեան և ժողովրդական տնտեսութեան կարող կառուցողներ:

Սոցիալիստական շինարարութեանը մասնակցելիս Ռ. Կ. Յե. Մ.-յան ամենակարեւոր խնդիրն այն է, վոր իր ամեն մի անդամին տնտեսական և կուլտուրական այնպիսի աշխատանքի լծի, վորը կհետաքրքրի նրան, կհամապատասխանի նրա հակումներին ու ընդունակութիւններին և միաժամանակ կոմունիստական դաստիարակութիւն կտա նրան:



14. Ռ. Կ. Յե. Մ.-նր յերիտասարդութեան տնտեսական ճակատում մղած պայքարին և Խորհրդային շինարարութեանը մասնակցումն հետևյալ ձևով.

ա) Ծանոթացնել բանվորագյուղացիական յերիտասարդական մասսաներին սոցիալիստական շինարարութեան և ժողովրդական տնտեսութեան վերականգման խնդիրներին, մասնակցել տնտեսական հարցերի քննութեանը:

բ) Միութեան ուժերը հատկացնել աշխատանքի ճակատի հարվածային ճյուղերին (հողագործութիւն, մանուկներ, պարենավորում և այլն):

գ) Խորհրդային տնտեսութեան և բանվորագյուղացիական տեխնիկական աշխատանքներին գործնականապես մասնակցելով պատրաստել աշխատակիցներ ու ղեկավարների նոր խմբեր՝ սոցիալիստական տնտեսութեան ու կյանքի զանազան ասպարեզների համար:

դ) Դաստիարակել բանվոր յերիտասարդութեանը Կոմունիստական կոլլեկտիվ աշխատանքի վոգով:

յե) Մասնակցել բանվորական, սպառողական, գյուղատնտեսական և պրոմիսլային կոոպերատիվներին կազմակերպմանը և թե աշխատանքներին:

զ) Մասնակցել բոլոր այն քաղաքական կամպանիաներին, վոր կազմակերպում են Կոմունիստական Կուսակցութիւնն ու Խորհրդային իշխանութիւնը և վորոնք նպաստում են կուսակցութեան կոմունիստական ազգեցութեան ամրապնդմանը բանվոր դասակարգի բոլոր մարմիններում (Խորհրդային ընտրութիւններ, կոոպերացիա, արհեստակցական միութիւններ և այլն):

ե) Ռ. Կ. Յե. Մ.-յան գյուղական բջիջներն ամեն կերպ ոժանդակում են Կոմունիստական Կուսակցությանն ու խորհրդային իշխանությանը գյուղական տնտեսութունների բարձրացման գործում՝ կարգի բերելով խորհրդային տնտեսութունների, կոմունաների աշխատանքները, գյուղի և քաղաքի կանոնավոր միեւրոփականակութունը և այլն և այլն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՃԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

15. Ռ. Կ. Յե. Մ.-նը գործոն մասնակցութուն է ցույց տալիս բանվորագյուղացիական Կարմիր Բանակի կազմակերպման և ամրապնդման գործում, ոգնում է խորհրդային իշխանությանը գորահավաքի ժամանակ և դասալքության դեմ կռիվելու: Կարմիր Բանակի շարքերում և զինվորական հիվանդանոցներում տանում է կրթական աշխատանք, վորի համար իր շարքերից ուղարկում է քաղ-աշխատակիցներ: Բանակի ամրապնդման համար ոժանդակում է կազմակերպել «շաբաթ»-ներ, «օր»-եր, և տանում է այլ աշխատանքներ, վորոնք կրթելով են նրա գրութունը:

16. Կարմիր բանակի գորեղացումը և մասնավորապես հրամանատարական կազմ սրտորաստելը խորհրդային Հանրապետության կարևորագույն խնդիրներից մեկը համարելով՝ Ռ. Կ. Յե. Մ.-նը լրացնում է Կարմիր հրամանատարական կուրսերը՝ աշխատանք տանելով կուրսերում իր բջիջների միջոցով:

17. Ռ. Կ. Յե. Մ.-նը յերիտաւարդ պրոլետարներին և Ռ. Ս. Ֆ. Ս. Հ.-յան գյուղացիներին բացատրում է Կարմիր բանակի շինարարության ու պայ-

քարի նշանակութունը, յերիտաստրդությանն ու շրջապատող մասսաներին հոգատար ու աշխուրջ վերաբերմունք է ներշնչում դեպի Կարմիր բանակի բոլոր կարիքները:

18. Ռ. Կ. Յե. Մ.-նը գործոն մասնակցութուն է ցույց տալիս մինչ-զինակոչային նախապատրաստական աշխատանքներին, վորի նպատակն է ֆիզիքական դաստիարակության ու զինվորական կրթության միջոցով պատրաստել Կարմիր Բանակի ապագա խմբերը: Դրա համար նա բանվոր-գյուղացիական լայն մասսաներին բացատրում է մինչ-զինակոչային նախապատրաստության նշանակութունն ու մեթոդները, քննության և ասում նրա կազմակերպչական բոլոր հարցերը, մինչ-զինակոչային հասակ ունեցողների մեջ տանում է քաղ-կրթական աշխատանքներ և որինակ է տալիս թե ինչպես մինչ-զինակոչային հասակ ունեցողն անհեղ կատարի իր պարտականութունները և կարգապահ լինի:

ՔԱՂ-ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԿ

19. Ռ. Կ. Յե. Մ.-նը տանում է քաղ-լուսավորչական աշխատանք, վորով իր անդամներին տալիս է Մարքսիստական Կոմունիստական ամբողջական աշխարհահայացք: Միությունը պատրաստում է խորհրդային իշխանության համար պայքարող գիտությամբ զինված մարտիկներ, սոցիալիստական տնտեսությանն ու պրոլետարական կուլտուրայի կառուցողներ: Միության մեջ տարած քաղ-լուսավորչական յեռանդուն աշխատանքը հանդիսանում է անհրաժեշտ հանգամանք մյուս բոլոր ասպարեզներում ունեցած աշխատանքն-

լի հաջողութեան համար և միտժամանակ ամենա-ար-
ժեքավոր միջոցն է միութեան անդամների մեջ սերտ
կապակցութեան ստեղծելու համար:

20. Աշխատավորութեան մեծամասնութեան ան-
գլխավորութեանը խոշոր խոչընդոտ է հանդիսանում
սոցալիստական շինարարութեան գործում: Ռ. Կ. Յե.
Մ-յան խնդիրներից մեկն է. վերացնել անգլխավորու-
թեանը միութեան անդամների ու ընդհանրապես բոն-
վորա-գյուղացիական յերիտասարդութեան միջից և
սփռելով պետական մարմիններին՝ հասակավոր ազ-
գաւորակցութեան մեջ գլխավորութեան տարածման
գործին:

21. Ռ. Կ. Յե. Մ-նը կազմակերպված մասսայա-
կան ագիտացիայի և պրոպոգանդի միջոցով աշխա-
տավոր յերիտասարդութեան մեջ տարածում է կոմու-
նիզմի գաղափարները. դրա համար նա պարբերա-
բար զեկուցումներ է տալիս ընթացիկ դեպքերի, խոր-
հրդային իշխանութեան քաղաքական և տնտեսական
նախաձեռնութեանների մասին, ժողովրդական տնտե-
սութեան և նրա բարձրացման միջոցների մասին և
սփռելով է Ռ. Կ. Մ-յանը ագիտացիոն գործերում:

22. Ռ. Կ. Յե. Մ-նը իր բոլոր անդամների հա-
մար պարտադիր է համարում քաղ-գլխավորութեան
վերոջ դասընթացը անցնել՝ այն է. հասարակութեան
կառուցման հիմունքները, բանվորական շարժման
պատմութեանը և կոմունիստական կուսակցութեան ու
խորհրդային իշխանութեան խնդիրները ու քաղաքա-
կանութեան ելութեանը:

23. Քաղ-լուսավորչական աշխատանքը հանդիսա-
նում է այն հզոր միջոցը, վերոջ զարգանում է բանվոր
յերիտասարդութեան դասակարգային ինքնագիտակ-
ցութեանը, միութեան ամեն մի անդամին վարժեցնում
է բոլոր յերևույթներին ու դեպքերին պրոլետարա-
կան դասակարգային գնահատում տալ, պրոլետարա-
կան յերիտասարդութեանը դաստիարակում է կոլլեկ-
տիվիստական վոգով և ատելութեամբ դեպի մանր-

բուրժուական սեփականատիրական իդեոլոգիան: Սա
առանձնապես կարևոր նշանակութեան է ստանում
Ռուսաստանի մանր-բուրժուական միջավայրում:

24. Իր անդամներից գլխավոր կոմունիստներ
պատրաստելիս Ռ. Կ. Յե. Մ-նը խուսափում է քաղա-
քական լոգոնգների անբովանդակ ու մակերեսային
յուրացումից և աշխատում է ծանոթացնել իր անդամ-
ներին մարդկային կուլտուրայի բոլոր հոգեկան կա-
րողութեաններին՝ ձգտելով բարձրացնել թե իր անդամ-
ների և թե բանվորա-գյուղացիական յերիտասարդու-
թեան մասսաների ընդհանուր կուլտուրական մակար-
դակը:

Միտժամանակ Ռ. Կ. Յե. Մ-նը գաղափարական
պայքար է մղում կրոնական նախապաշարունակների դեմ,
վերոնք մթագնում են աշխատավոր յերիտասարդու-
թեան գլխակցութեանը:

25. Յերիտասարդութեանն արտադրական վնա-
սակար ճյուղերում աշխատելու ծանր հետևանքներից
ազատելու համար և նրանցից կոմունիզմի համար ու-
ժեղ ու գիմացկուն մարտիկներ պատրաստելու նպա-
տակով Ռ. Կ. Յե. Մ-նը խոշոր աշխատանք է տանում
ֆիզիքական դաստիարակութեան, սպորտի և ընդհանուր
զինավարժութեան տալարեցնելում:

26. Ռ. Կ. Յե. Մ-նը գլուղում իր քաղ-լուսա-
վորչական աշխատանքները տանում է հարմարեցնե-
լով գլուղական յերիտասարդութեան կյանքի առանձ-
նահատուկ պայմաններին: Մեծ ուշադրութեան է
դարձնում գլուղի իր անդամների կուլտուրական մա-
կարդակի բարձրացմանը, մասնակից է անում նրանց
գլուղի հասարակական և տնտեսական կյանքին և
խորհրդային իշխանութեան ու կոմ-կուսի նախաձեռնու-
թեանների իրականացման գործին:

27. Ռ. Կ. Յե. Մ-նը քաղ-լուսավորչական աշ-
խատանքներ տանում է Ռ. Ս. Ֆ. Ս. Հ-յան մեջ
բնակվող բոլոր ազգութեանների մեջ՝ իրենց մայրենի
լեզվով: Այդ աշխատանքները համակերպում է նրանց

աղգային-կենցաղային առանձնահատուկ պայմաններին և հարկ յեղած դեպքում այս կամ այն աղգութեան մեջ դաստիարակական ազդեցություն աշխատանք տանելու համար կազմակերպում և հատուկ մարմիններ:

28. Ռ. Կ. Յե. Մ-նը իր քաղ-լուսավորչական աշխատանքները շարկապում է Քաղլուսավարի գործունեությունը և տանում է նրա ունեությունը: Նա հիմնում է.

ա) Միություն ակումբներ՝ քաղաքական, թատերական, գրական, յերաժշտական, նկարչական, լրագրական և այլ խմբակներով, կազմակերպում է երակուրսիաներ (շրջագայություններ) գեպի թանգարաններ, ցուցահանդեսներ, գալերեաներ կազմակերպում է դրույցներ, դասախոսություններ, կուրսեր, գրադարաններ թերթաբաններ և այլն:

բ) Յերիտասարդական մամուլ, վորը լուսարանում է բանվորա-գյուղացիական յերիտասարդության կյանքը և վորին մասնակցում են հենց իրենք՝ յերիտասարդ պրոլետարներն ու գյուղացիները:

գ) Հիմնվում է գրադիտություն կուրսեր-գալրոյներ, քաղգրագիտություն գալրոյներ և այլն:

ե) Ձեռնարկում և հատուկ յերիտասարդական գրականություն հրատարակություն:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՒՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐ- ԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29. Լինելով ընդհանուր պրոլետարական շարժման մի մասնիկը՝ Ռ. Կ. Յե. Մ-ը իր նպատակներով ու գործունեությունը դասակարգային պրոլետարական մի կազմակերպություն է: Նրա հիմնական և ղեկավարող կորիզը բանվոր յերիտասարդությունն է:

Ռ. Կ. Յե. Մ-նը իր շարքերն է գրավում բանվոր յերիտասարդության լայն մասսաներին և ընդու-

նում է մանր-բուժական միջավայրից դուրս յեկած այն անհատներին, վորոնք ապացուցել են վոր նվիրված են պրոլետարիատին: Գյուղում Ռ. Կ. Յե. Մ-նը հենվում է աղքատ ու բատրակ յերիտասարդության վրա և իր շարքերն է ընդունում միջակ գյուղացիական յերիտասարդության այն տարրերին վորոնք անցել են կոմունիզմի կողմը:

30. Ռ. Կ. Յե. Մ-յան կազմակերպչական կառուցվածքը հիմնված է ղեմավարական կենտրոնացման սկզբունքի վրա: Նրա կարևորագույն խնդիրներն են. զարգացնել Ռ. Կ. Յե. Մ-յան բոլոր անդամների լայն ինքնագործունեությունը, ունենալ կուրս կարգապահություն իր շարքերում և սերտ ու հարատև կապ պահպանել բանվորա-գյուղացիության յերիտասարդության անկազմակերպ լայն մասսաների հետ:

31. Դասակարգային պայքարը պահանջում է, վոր պրոլետարական շարժման բազմազան ձևերը միանան, մի ընդհանուր կենտրոնի ու ղեկավարություն յենթարկվեն: Այդպիսի ընդհանուր միացնող ու ղեկավարող մի կենտրոն կարող է լինել միայն քաղաքական կուռակցությունը:

Պրոլետարիատի կուռակցությունը՝ Ռ. Կ. Կ-ը այն կազմակերպված քաղաքական լծակն է, վորի ոգնությունը բանվոր դասակարգի առաջավոր մասը պրոլետարական և կիսապրոլետարական մասսաներին առաջնորդում է ձիշտ ճանապարհով: Յերիտասարդական կոմունիստական շարժումը մի մասն է ընդհանուր պրոլետարական շարժման, վորի նպատակն է կործանել հին կապիտալիստական աշխարհը և կազմակերպել սոցիալիստական հասարակություն, ուստի և պրոլետարական յերիտասարդությունը աշխատում է Ռ. Կ. Կ.-յան ղեկավարությունը:

Ռ. Կ. Յե. Մ-նը ամբողջապես ընդունում է Ռ. Կ. Կ-յան ծրագիրն ու գործելակերպը: Իր անդամների քաղ-դաստիարակություն ու քաղաքական կյանքին մասնակից անելու նպատակով քննելով խորհրդա-

յին իշխանության ու կուսակցության ընդհանուր հարցերն ու աշխատանքները՝ Ռ. Կ. Յե. Մ-նը յենթարկվում է կուսակցության քաղաքական ցուցմունքներին և հսկողությանը: Ռ. Կ. Յե. Մ-յան Կենտկոմը անմիջականորեն յենթարկվում է Ռ. Կ. Կ-յանը:

32. Ռ. Կ. Կ-յան հսկողության և ղեկավարության տակ մասնակցելով բանվոր դասակարգի ընդհանուր պայքարին, բանվոր յերիտասարեության լայն մասսաներին ինքնագործունեություն վրա հիմնված կոմունիստական դաստիարակություն տալու նպատակով Ռ. Կ. Յե. Մ-նը հանդիսանում է ինքնավար մի կազմակերպություն: Այսինքն, ունի վարից մինչև վեր կենտրոնացած մի կազմակերպություն (հենց իր միության կողմից ընտրված ղեկավար մարմիններ):

Ինքնուրույն կերպով վորոշում է ագիտացիայի, պրոպագանդայի և կազմակերպչական սոցխատանքի ձևերը և սոցխալիստական շինարարության ասպարեզում իր մասնակցության յեղանակը, վոր վերաբերում է յերիտասարդության դաստիարակությանն ու աշխատանքին:

33. Բոլոր յերկրների կոմունիստական յերիտասարդական կազմակերպությունները միանում են Կոմունիստական Յերիտասարդական Ինտերնացիոնալի մեջ, վորը ղեկավարում է ամբողջ աշխարհի յերիտասարդ պրոլետարների պայքարը և հանդիսանում է III Կոմունիստական Ինտերնացիոնալի մի մասնիկը:

Ռ. Կ. Յե. Մ-նը աշխատելով պրոլետարական դիկտատուրայի սովելի ևս բարենպաստ պայմաններում՝ մասնակցում է Կոմ. Յեր. Ինտերն. աշխատանքներին ու պայքարին և ամեն կերպ ոգնում է Արևելքի ու Արևմուտքի յեղբայրական կազմակերպություններին:



ՀՀ Ազգային գրադարան



